


**1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ  
(սպառողական շուկա)**

**ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)**

	2002թ. հունվար-փետրվար		%% ընդհանուրի նկատմամբ	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	%% 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ	2002թ. հունվար - փետրվար	2001թ. հունվար-փետրվար
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	87751.5	107.6	100.0	100.0
այդ թվում.				
մանրածախ ապրանքաշրջանառություն	64220.7	108.6	73.2	72.5
բնակչությանը մատուցված ծառայություններ	23530.8	105.2	26.8	27.5

**ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները  
(տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ)**



2002թ. հունվար-փետրվարին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (համադրելի գներով՝ 7.6%) և դրանում 0.7 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը: 2002թ. փետրվարին սպառողական շուկայի ծավալը հունվարի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 101.1 %:

**Մանրածախ առևտուր**


2002թ. հունվար-փետրվարին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 64.2 մլրդ. դրամ, որը 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 8.6%-ով (2002թ. փետրվարին հունվարի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 99.9%) :

**ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-փետրվարին**

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը % ընդհանուրի նկատմամբ
Ընդամենը	64220.7	100
այդ թվում՝		
խանութներ	32659.5	50.8
հանրային սննդի կազմակերպություններ	592.9	0.9
սպառողական ապրանքների շուկաներ (տոնավաճառներ)	16743.3	26.1
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	3066.1	4.8
կրպակներ	11158.9	17.4

**Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2002թ. հունվար-փետրվարին**

(%% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-փետրվարին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 94.3% (60561.7 մլն. դրամ), իսկ 5.7%՝ (3659.0 մլն. դրամ) բաժին է ընկել հանրային սննդի կազմակերպություններում և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում իրականացվող առևտրին:

Հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից (տոնավաճառներից) ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2002թ. հունվար-փետրվարին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 16743.3 մլն. դրամ:

**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառներ) ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2002թ. հունվար-փետրվարին**


	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում %-ով՝ ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Արագածոտն	35.8	-	100.0
Արարատ	81.9	-	100.0
Արմավիր	98.5	60.8	39.2
Գեղարքունիք	223.3	12.5	87.5
Լոռի	339.5	49.0	51.0
Կոտայք	194.5	16.3	83.7
Շիրակ	203.1	0.5	99.5
Սյունիք	84.7	1.8	98.2
Վայոց ձոր	-	-	-

# 1. ԻՐԱԿԱ և ՀԱՏՎԱԾ

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում %-ով՝ ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Տավուշ	224.0	64.2	35.8
ք. Երևան	15258.0	13.8	86.2
Ընդամենը ՀՀ	16743.3	15.2	84.8

Հարկ է նշել, որ հանրապետությունում գործող սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում 2002թ. հունվար-փետրվարին կազմել է 84.8%, իսկ պարենային ապրանքներինը՝ 15.2%:

**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ըստ ք. Երևանի և մյուս մարզերի (ամփոփ)**  
(տոկոսով ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-փետրվարին 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է ք. Երևանի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 1.1 տոկոսային կետով:

2002թ. մարտի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 25114.9 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 61 օր:

Հանրապետության սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: 2002թ. հունվար-փետրվարին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 4.8% կամ 3066.1<sup>1</sup> մլն. դրամը:


<sup>1</sup> Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպված շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

**Բնակչությանը մատուցված ծառայություններ**

2002թ. հունվար-փետրվարին հանրապետությունում ըստ ծառայությունների մատուցող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 23.5 մլրդ. դրամ, որը 2001թ. հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ համադրելի գներով, աճել է 5.2%-ով: Կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 273.7 մլն. դրամ, որը 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ համադրելի գներով աճել է 15.3%-ով: 2002թ. հունվար-փետրվարին 2001թ. հունվար-փետրվարի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0.2% հավելաճ: Սակագների հավելաճ է գրանցվել կենցաղային(0.7%), փոստային և հեռահաղորդակցության(1.6%), մշակույթի(2.7%), զբոսաշրջության և էքսկուրսային(0.3%), կրթության (4.5%), օդային տրանսպորտի(4.8%) ծառայությունների ոլորտում:

2002թ. փետրվարին հունվարի նկատմամբ բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը համադրելի գներով կազմել է 104.4%:

**Մատուցված ծառայությունների կառուցվածքը 2002թ. հունվար-փետրվարին**  
(%% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-փետրվարին բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ են ունեցել բնակարանային-կոմունալ տնտեսության և մարդատար տրանսպորտի ծառայությունները, համապատասխանաբար՝ 32.5 և 33.3%:

2001թ. հունվար-փետրվարին 37 խաղատներից հավաքագրված հաշվետվությունների տվյալներով ծառայությունների ծավալը կազմել է 243.2 մլն. դրամ կամ ծառայությունների ընդհանուր ծավալի 1.0%: